



**ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ**  
**ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ**

«Հայաստանի Հանրապետության  
փաստաբանական դպրոց» հիմնադրամի  
Ընդունելության հանձնաժողովին

---

Անուն, հայրանուն, ազգանուն

---

Հաշվառման հասցե

---

Հեռախոսահամար

---

Էլեկտրոնային հասցե

**ԴԻՄՈՒՄ**  
**(հատուկ դիմորդի)**

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց) կողմից հայտարարված ընդունելության քննություններին՝ որպես **հատուկ դիմորդ**:

Ընդունելության քննությունները հանձնելու և ընդունվելու դեպքում՝ ուսուցմանը մասնակցելու նպատակով ընտրում եմ հետևյալ մասնագիտացումը՝

---

նշել՝ (1) քրեաիրավական կամ (2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական)

---

նշել՝ (1) առկա կամ (2) հեռավար

**Ծանոթացել եմ** ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությանը, ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի 31.05.2022թ. թիվ 7/1-Լ որոշմամբ հաստատված Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգին, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ հաստատված՝ ընդունելության գործընթացի ժամանակացույցին, Ընդունելության հանձնաժողովի գործունեության կարգին:

**Հավաստում եմ**, որ համակարգչից օգտվելու իմ գիտելիքները (առնվազն՝ MS Word, Excel, PowerPoint) բավարար են ընդունելության քննություններին մասնակցելու, ինչպես նաև ընդունվելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնելու համար:

**Տեղեկացված եմ**, որ ընդունելության գրավոր քննության ընթացքը (այդ թվում՝ համակարգիչները) տեսանկարահանվելու և տեսաձայնագրվելու է, գրավոր քննության ընթացքն առցանց (օնլայն (on-line)) հեռարձակվելու է, իսկ քննական սրահներում և դրան հարակից տարածքներում կարող է տեղադրված լինեն տեխնիկական միջոցների խլացուցիչ սարքեր:

**Հավաստում եմ**, որ հայերենին տիրապետող գործունակ ֆիզիկական անձ եմ և իմ մասով առկա չեն «Փաստաբանության մասին» օրենքի 45.6-րդ հոդվածով սահմանված ունկնդրի կարգավիճակը բացառող պայմանները:

**Իրազեկված եմ**, որ ընդունելության քննության գործընթացից բխող հարցերով ծանուցումները, որոշումները և այլ փաստաթղթերը (այդ թվում՝ շտեմարանը) տեղադրվելու են ՀՀ փաստաբանական դպրոցի կայքէջում ([www.advschool.am](http://www.advschool.am) կամ [www.advocates.academy](http://www.advocates.academy)) կամ ուղարկվելու են սույն դիմումի մեջ իմ նշած էլեկտրոնային հասցեին, ինչը համարվելու է պատշաճ ծանուցում:

<b>Հատուկ (օժանդակ) հարմարությունների կարիք ունենալու դեպքում նշել՝ կարիքի բնույթը:</b>

**Դիմումին կից ներկայացնում եմ՝ (շրջանակի վրա կատարել նշում՝ V)**

- սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ.
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- 3x4 չափի 2 (երկու) լուսանկար կամ լուսանկարի սկան.
- բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի պատճենը **կամ** բուհից տրված տեղեկանքի բնօրինակը (**ընդգծել ընտրված տարբերակը**).
- ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը կամ վճարից ազատելու մասին դիմումը.
- դատավճարի վերաբերյալ տեղեկանքը **կամ** նշված տեղեկանքը ստանալու մասին լիազորագիրը (**ընդգծել ընտրված տարբերակը**).

**Նշել ընտրված տարբերակը՝**

- առնվազն 10 (տասը) տարվա փաստաբանի, դատախազի, քննիչի, դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, **եթե** հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան աշխատանքային (մասնագիտական) ստաժն է,
- իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, **եթե** հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան գիտական աստիճանն է, ինչպես նաև առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը,
- առնվազն 10 (տասը) տարվա իրավաբանի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում գիտամանկավարժական գործունեության ստաժը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթի պատճենը), **եթե** հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան աշխատանքային ստաժն է.

**Հեռավար հատուկ դիմորդի կարգավիճակ ստանալու համար նաև՝**

- տեղեկանք առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից առնվազն 80 (ութսուն) կմ հեռավորության վրա է փաստացի բնակվում (եթե հաշվառման հասցեն տարբերվում է փաստացի բնակության վայրի հասցեից).

- այլ փաստաթղթեր (նշե՛լ).

\_\_\_\_\_:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը ՀՀ փաստաբանական դպրոցին ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների արժանահավատությունը պարզելու նպատակով անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել պետական և ոչ պետական մարմիններին (կազմակերպություններին) և ստանալ դրանց պատասխանները, այդ թվում՝ ինձ վերաբերող անձնական տվյալները:

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 202\_\_թ.  
(օր,ամիս, տարեթիվ)